ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 84-Հ

«20» 10 2023 թ.Ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի N 47 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազության բնականոն գործունեությունն ապահովելու և աշխատանքի հավասարաչափ ծանրաբեռնվածություն ու բաշխում կատարելու անհրաժեշտությունից ելնելով, թիվ 2 կայազորի զինվորական դատախազության տարածքային բաժնի վարորդ-ցրիչի 1 թափուր հաստիքը կրճատելու և Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազի օգնականի 1 հաստիք ավելացնելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 7-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2022 թվականի հունիսի 27-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության հաստիքացուցակը սահմանելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2021 թվականի նոյեմբերի 22-ի N 91 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 47 հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 2-րդ հավելվածի 4-րդ բաժնի 52-րդ գլխի 204-րդ կետի «Վարորդ-ցրիչ 1» բառերը փոխարինել «Վարորդ-ցրիչ 0» բառերով, նույն գլխի «**Ընդամենը 2**» բառերը՝ «**Ընդամենը 1**», «**ԸՆԴԱՄԵՆԸ՝ Կայազորի զինվորական դատախազությունում 5**» բառերը՝ «**ԸՆԴԱՄԵՆԸ՝ Կայազորի զինվորական դատախազությունում 4**», իսկ 4-րդ և 5-րդ բաժինների ***«Ընդամենը Հայաստանի Հանրապետության զինվորական***

դատախազությունում 54» բառերը՝ ***«Ընդամենը Հայաստանի Հանրապետության զինվորական դատախազությունում 53»*** *բառերով,*

2) 3-րդ հավելվածի 3-րդ կետի «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալի օգնական 4» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալի օգնական 5», իսկ «***ԸՆԴԱՄԵՆԸ՝ 14***» բառերը՝ «***ԸՆԴԱՄԵՆԸ՝ 15***» բառերով:

2. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

3. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ավագ դատախազին, Երևան քաղաքի դատախազի պաշտոնակատարին, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին, ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ